ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն **51**(1), 2017 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 551.58

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վ. Ա. ՊՈՏՈՍՅԱՆ *

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Հոդվածում վիճակագրական տվյալների վերլուծության, ընդհանրացման և ամփոփման հիման վրա տրված է ՀՀ բնակչության թվաքանակի շարժընթացն ըստ սեռի և տարիքային հիմնական խմբերի: 2011թ. մարդահամարի և 2015թ. ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա կատարվել է ՀՀ բնակչության տարիքային հիմնական խմբերի և սեռային բաշխվածության վերլուծություն, տարածաշրջանային տարբերությունների և հիմնախնդիրների բացահայտում:

***Keywords*:** population, sex and age structure, main age groups, regional differences, regional problems.

Աշխարհագրական ցանկացած հետազոտություններում առանձնահատուկ տեղ ունի բնակչության սեռատարիքային կառուցվածքի առանձնահատկությունների, տարածքային ներքին տարբերությունների և հիմնախնդիրների բացահայտումը: Վերջինս ուսումնասիրվում է տարածաշրջանի աշխատանքային ռեսուրսների հաշվարկման և գնահատման, աշխատունակ, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների, թոշակառուների, զինակոչիների թվաքանակի որոշման և մոտակա տարիներին բնակչության թվի և կառուցվածքի փոփոխության միտումները հասկանալու համար, ինչը թույլ է տալիս կանխատեսել տարածաշրջանի բնակչության հեռանկարային թիվը, պլանավորել սպառման առարկաների արտադրությունը, սպասարկման օբյեկտների քանակը և տեղաբաշխումը, ձևավորել արդյունավետ կենսաթոշակային համակարգ և այլն [1]:

Անկախության տարիներին ՀՀ-ում տեղի ունեցած տնտեսական, սոցիալական, քաղաքական, ժողովրդագրական և տարածաշրջանային գործընթացներն իրենց ազդեցությունն են թողել բնակչության ներկայիս սեռատարիքային կառուցվածքի վրա: ՀՀ մշտական բնակչության տարիքային հիմնական խմբերում տեղի են ունեցել նկատելի փոփոխություններ, որոնց ուսումնասիրությունը և տարածաշրջանային տարբերությունների և հիմնախնդիրների բացահայտումն ունի ինչպես գիտական, այնպես էլ կիրառական նշանակություն: Խորհրդային առաջին տարիներին տղամարդկանց թվաքանակն մեծ է եղել կանանց թվաքանակից: Հետագա տարիների ընթացքում հանրապետությունում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական արմատական տեղաշարժերը, երկրորդ համաշխարհային

* E-mail: vahan.potosyan.93@mail.ru

պատերազմը, հասարակական կյանքում հայ կնոջ դերի աստիճանական բարելավումն և բարձրացումը բերեցին կանանց քանակի ավելացմանը բնակչության ընդհանուր թվաքանակում: Վերջին երկու տասնամյակներին տղամարդկանց թվաքանակի առավել ցածր ցուցանիշը պայմանավորված է նաև հանրապետությունից հիմնական արտագաղթող բնակչության մեջ նրանց մեծ թվով (աղյ. 1):

Աղյուսակ 1

ՀՀ մշտական բնակչության թվաքանակի շարժընթացն ըստ սեռի [2–7]

Տարեթիվը	Բնակչության ընդհանուր թիվը, հազ. մարդ	Տղամարդիկ		Կանայք	
		հազ. մարդ	%	հազ. մարդ	%
1926	881,3	449,1	51,0	432,2	49,0
1959	1765,3	846,6	48,0	918,7	52,0
1979	3037,3	1477,9	48,7	1559,4	51,3
1989	3304,8	1619,3	49,0	1685,5	51,0
2001	3213,0	1542,0	48,0	1671,0	52,0
2011	3018,9	1448,1	48,0	1570,8	52,0
2015	3010,6	1439,2	47,8	1571,4	52,2

Աղյուսակ 2

ՀՀ մշտական բնակչության կառուցվածքն ըստ հիմնական տարիքային խմբերի (%) [2–4, 6]

Տարիքը	1979	1989	1990	1995	2001	2005	2011	2015
աշխատունակից ցածր	33,3	32,1	32,3	30,8	26,3	23,6	20,2	20,5
աշխատունակ	57,3	56,2	55,5	55,1	60,0	63,3	67,8	67,9
աշխատունակից բարձր	9,3	11,6	12,2	14,1	13,7	13,1	12,0	11,6

Նկատելի փոփոխություններ է կրել ՀՀ բնակչության տարիքային կառուցվածքը: Անցած քսանհինգ տարիների ընթացքում 11,8 տոկոսային կետով նվազել է մինչաշխատունակ տարիքի բնակչության (ՄՏԲ) տեսակարար կշիռը, իսկ աշխատունակ տարիքի բնակչության (ԱՏԲ) տեսակարար կշիռը ավելացել է 12,4 տոկոսային կետով (աղյ. 2): Այս փոփոխությունների պատճառը առավելապես ՀՀ բնակչության վերարտադրության (բնական շարժի) բաղադրիչներում տեղի ունեցած փոփոխություններն են: 1985 թ. համեմատությամբ ՀՀ բնակչության ծնելիության գործակիցը 2015 թ.-ին նվազել է 10,2 պրոմիլային կետով, մահացությունն ավելացել է 3,4 կետով, իսկ բնական հավելաճը պակասել է 13,6 պրոմիլային կետով (աղյ. 3): Բնակչության վերարտադրության բաղադրիչներում տեղի ունեցած նշված փոփոխություններն իրենց ազդեցությունն են թողել բնակչության սեռատարիքային կառուցվածքի ձևավորման գործոնների վրա: Վերը նշված՝ ՄՏԲ նվազման և ԱՏԲ տեսակարար կշռի աճի պատճառը ծնելիության գործակցի աստիճանական նվազումն է (աղյ. 2):

ՀՀ մշտական բնակչության թվաքանակում 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ ՄՏԲ տեսակարար կշիռը կազմել է 20,5%: Բացարձակ թվով այն 616739 է (287553՝ կանայք, 329186՝ տղամարդիկ): Աշխատանքային տարիքից ցածր բնակչության 61,8% բաժին է ընկնում քաղաքային բնակչությանը, 38,2%-ը՝ գյուղականին: Հետմարդահամարային ժամանակահատվածում (2011–2015թթ.) ՀՀ-ում ՄՏԲ բացարձակ թվաքանակն ավելացել է ընդամենը 1,2%-ով: ՄՏԲ 33,4%-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին: Միայն վերջին 5 տարում (2011–2015 թթ.) Երևանի ՄՏԲ տեսակարար կշիռը ՀՀ-ում բարձրացել է 1,4 տոկոսային կետով: Բացի Երևան քաղաքից 2011–2015 թթ. ՄՏԲ տեսակարար կշռի փոքր աճ է եղել

նաև Կոտայքի մարզում (0,1%): Շիրակի և Վայոց Ձորի մարզերում այդ ցուցանիշը մնացել է նույնը, իսկ մնացած բոլոր մարզերում՝ նվազել է: Երևան քաղաքում և բոլոր մարզերում ՄՏԲ թվաքանակում գերակշռում են տղամարդիկ: Այս ցուցանիշը փոխվում է 52,3%-ից (Սյունիքի և Վայոց Ձորի մարզեր) մինչև 55,3% (Գեղարքունիքի մարզ): ՀՀ քաղաքային բնակչության մեջ տարիքային այս խմբում տղամարդկանց առավել բարձր տեսակարար կշիռ ունեն Արագածոտնի (55,1%) և Գեղարքունիքի (54,9%) մարզերը, իսկ առավել ցածր՝ Սյունիքի (51,9%), Տավուշի (52,2%) և Արարատի (52,2%) մարզերը: Գյուղական բնակչության նշված տարիքային խմբում տղամարդկանց մասնաբաժնի առավել բարձր ցուցանիշներ ունեն Գեղարքունիքի, Արագածոտնի, Արմավիրի և Վայոց Ձորի, իսկ առավել ցածր՝ Տավուշի (52,6%) և Սյունիքի (53,0%) մարզերը:

Աղյուսակ 3

ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները (‰)

Տարեթիվը	Ծնելիություն	Մահացություն	Բնական աճ
1960	40,1	6,8	33,3
1985	24,1	5,9	18,2
1990	22,5	6,2	16,3
1995	15,0	7,6	7,4
2001	10,0	7,5	2,5
2005	11,7	8,4	3,5
2011	14,3	9,2	5,1
2015	13,9	9,3	4,6

Աշխատանքային տարիքային խմբում 2011–2015 թթ. բնակչության բացարձակ թիվը ոչ միայն չի ավելացել, այլ նվազել է մոտ 25000 (1,2%), քանի որ հանրապետությունից արտագաղթողների թվաքանակում առավել բարձր է ԱՏԲ քանակը: ՀՀ-ում աշխատունակ տարիքի բնակչության բարձր տեսակարար կշռով՝ 35,3%, առանձնանում է մայրաքաղաք Երևանը, իսկ միայն քաղաքային բնակչության կտրվածքով այդ ցուցանիշը կազմում է 55,85%: Բացառությամբ Արմավիրի, որտեղ 2011–2015 թթ. ընթացքում ԱՏԲ ավելացել է 0,9%, մնացած բոլոր մարզերում այն նվազել է: Լոռու և Շիրակի մարզերում ԱՏԲ բացարձակ թիվը պակասել է 11956-ով (ավելին քան Երևանում): Այս երկու մարզերին բաժին է ընկնում 2011–2015 թթ. ընթացքում ԱՏԲ թվաքանակի նվազման շուրջ 48%: ՀՀ ԱՏԲ մեջ, բացառությամբ Գեղարքունիքի մարզի, մնացած բոլոր մարզերում կանանց տեսակարար կշիռն ավելի բարձր է: Առավել աչքի են ընկնում Երևանը և Լոռու մարզը, որոնցում կանանց մասնաբաժինն ԱՏԲ մեջ կազմում է համապատասխանաբար 54,4 և 53,3%: Գեղարքունիքի մարզում ԱՏԲ խմբում տղամարդկանց քանակի գերակշռությունը կանանց նկատմամբ (50,1/49,9) կարելի է համարել բացառիկ երևույթ:

2015 թ. հունվարի 1-ի դրությամբ, ընթացիկ հաշվառման տվյալներով ՀՀ-ում աշխատանքային տարիքից բարձր բնակչությունը (ԱՏԲԲ) կազմել 349404 մարդ կամ ընդհանուր բնակչության 11,6%: ՀՀ-ում ԱՏԲԲ 39,9% կազմում են տղամարդիկ, 60,1%՝ կանայք: Այս խմբի բնակչության 68,3% ապրում է քաղաքներում, իսկ 31,7%՝ գյուղերում: ՀՀ-ում ԱՏԲԲ ավելի քան 41% բաժին է ընկնում միայն Երևան քաղաքին, իսկ միայն քաղաքային բնակչության թվաքանակում Երևանին բաժին է ընկնում տարիքային այս խմբի բնակչության 60,3%: 2011–2015 թթ. Երևանի բաժինը հանրապետության ԱՏԲԲ թվաքանակում բարձրացել է տոկոսային 2 կետով: Բացառությամբ Կոտայքի և Սյունիքի, մնացած բոլոր մարզերում նշված ժամանակահատվածում ԱՏԲԲ տեսակարար կշիռը տարիքային այդ խմբի ՀՀ բնակչության թվաքանակում նվազել է:

Աղյուսակ 4

ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի և տարիքի տարեսկզբի դրությամբ [4, 7–9]

Տարիքային խմբեր	2011 թ.					2015 թ.				
	կանայք		տղամարդիկ		ընդամենը	կանայք		տղամարդիկ		ընդամենը
	քանակը	%	քանակը	%		քանակը	%	քանակը	%	
1. գյուղական բնակչություն										
մինչև 15տ.	129785	54,0	110473	46,0	240258	127530	54,1	107954	45,9	235484
15–63տտ.	376700	50,1	374813	49,9	751513	373588	49,7	377860	50,3	751448
63-ից բարձր	46195	39,9	69601	60,1	115796	43586	39,4	67166	60,6	110752
Ընդամենը	552680	49,9	554887	50,1	1107567	544704	49,6	552980	50,4	1097684
2. քաղաքային բնակչություն										
մինչև 15տ.	195099	52,9	173834	47,1	368933	201656	52,9	179599	47,1	381255
15–63տտ.	609033	46,2	708841	53,8	1317874	596818	46,2	696189	53,8	1293007
63-ից բարձր	91240	40,6	133240	59,4	224480	95970	40,1	142682	59,9	238652
Ընդամենը	895371	46,8	1015915	53,2	1911287	894444	46,8	1018470	53,2	1912914
3. ընդամենը հանրապետությունում										
մինչև 15տ.	324884	53,3	284307	46,7	609191	329186	53,4	287553	46,6	616739
15–63տտ.	985733	47,6	1083654	52,4	2069387	970406	47,5	1074049	52,5	2044455
63-ից բարձր	137435	40,4	202841	59,6	340276	139556	39,9	209848	60,1	349404
Ընդամենը	1448052	48,0	1570802	52,0	3018854	1439148	47,8	1571450	52,2	3010598

Աղյուսակ 5

ՀՀ մարզերի մշտական բնակչության կառուցվածքն ըստ հիմնական տարիքային խմբերի (%) [5, 7, 9]

Տարիքային խմբեր		Տարեթվեր	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ	Երևան
մինչև 15տ.		2011	21,7	21,4	21,5	22,2	20,3	21,6	20,1	20,4	20,0	21,3	18,4
		2015	21,8	21,5	21,3	21,7	21,1	21,9	20,7	19,6	19,7	20,8	19,2
15–63տտ.		2011	68,2	69,0	69,2	68,6	66,8	68,9	69,1	68,0	68,3	65,0	69,0
		2015	68,3	68,9	69,4	69,0	66,0	68,4	68,5	68,3	68,4	65,4	67,4
63-ից բարձր		2011	10,1	9,6	9,2	9,2	12,9	9,5	10,8	11,6	11,7	13,7	12,6
		2015	9,9	9,6	9,3	9,3	12,9	9,7	10,8	12,1	11,9	13,8	13,4

ՀՀ բոլոր մարզերում և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակչության մեջ, Երևանում ԱՏԲԲ խմբում ակնհայտորեն գերակշռում են կանայք: ՀՀ միջին ցուցանիշից ԱՏԲԲ խմբում կանանց տեսակարար կշիռն առավել բարձր է Լոռու և Շիրակի, առավել ցածր՝ Սյունիքի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերում:

ՀՀ մշտական բնակչության սեռատարիքային կառուցվածքն առանձնանում է տարածաշնջանային (մարզային) որոշակի առանձնահատկություններով և հիմնախնդիրներով, որոնց բացահայտումն և գնահատումն ունի գիտագործնական կարևոր նշանակություն: ՀՀ մարզերի և Երևան քաղաքի մշտական բնակչության սեռատարիքային կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1. ՀՀ մինչաշխատունակ տարիքի բնակչության 60%-ից ավելին բաժին է ընկնում Երևան քաղաքին, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերին: Հանրապետության քաղաքային բնակչության մեջ մինչաշխատունակ բնակչության տարիքային խմբում տղամարդկանց առավել բարձր տեսակարար կշիռ ունեն Արագածոտնի և Գեղարքունիքի, իսկ առավել ցածր բաժին՝ Սյունիքի, Տավուշի և Արարատի մարզերը: Գյուղական բնակչության համապատասխան

տարիքային խմբում տղամարդկանց մասնաբաժնի առավել մեծ ցուցանիշներ ունեն Գեղարքունիքի, Արագածոտնի, Արմավիրի և Վայոց ձորի, իսկ առավել ցածր՝ Տավուշի և Սյունիքի մարզերը:

2. ՀՀ աշխատանքային տարիքի ընդհանուր բնակչության մեջ բոլոր մարզերում, բացառությամբ Գեղարքունիքի, կանանց տեսակարար կշիռն ավելի բարձր է: Մասնավորապես աչքի են ընկնում Երևան քաղաքը և Լոռու մազը, որոնցում կանանց մասնաբաժինն ԱՏԲ մեջ կազմում է համապատասխանաբար 54,4 և 53,3%: Գեղարքունիքի մարզում տարիքային այս խմբում տղամարդկանց գերակշռությունը կանանց նկատմամբ բացառիկ երևույթ է:

3. ՀՀ ԱՏԲԲ կենտրոնացվածությամբ աչքի է ընկնում Երևան քաղաքը: ՀՀ քաղաքային բնակչության թվաքանակում միայն Երևանին բաժին է ընկնում տարիքային այս խմբի բնակչության 60,3%: Հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակչության կառուցվածքում և հետաշխատունակ տարիքի բնակչության խմբում ակնհայտորեն գերակշռում են կանայք: Հանրապետության միջին ցուցանիշի համեմատ տարիքային այս խմբում կանանց տեսակարար կշռի առավել բարձր ցուցանիշներ ունեն Լոռու և Շիրակի, իսկ առավել ցածր՝ Սյունիքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերը:

4. Ըստ սեռային կազմի հանրապետության բնակչության տարիքային հիմնական խմբերում պահպանվում է բնակչության սեռատարիքային կառուցվածքին բնորոշ ընդհանուր օրինաչափությունը՝ աշխատանքային տարիքից ցածր բնակչության մեջ գերակշռում են տղամարդիկ, իսկ հաջորդ երկու խմբերում՝ կանայք: Այս օրինաչափությունը պահպանվումէ ինչպես ՀՀ քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության դեպքում:

5. Արագածոտնի մարզը ՀՀ-ում երկրորդն է ընդհանուր բնակչության մեջ աշխատանքային տարիքից ցածր բնակչության մասնաբաժնով, ինչը պայմանավորված է մարզում հանրապետական միջին ցուցանիշի համեմատությամբ բնական հավելաճի համեմատաբար բարձր ցուցանիշով:

6. Արարատի և Արմավիրի մարզերը առանձնանում են համեմատաբար բարենպաստ սեռատարիքային կառուցվածքով: Դրանք ՀՀ-ում առաջին եռյակում են ԱՏԲ մասնաբաժնով, հետաշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինները ցածր են հանրապետական միջին համապատասխան ցուցանիշից, իսկ մինչաշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշիռները բարձր են հանրապետության միջին ցուցանիշից:

7. Լոռին՝ առանձնանում է բնակչության անբարենպաստ սեռատարիքային կառուցվածքով: Մարզը երկրորդն է ՀՀ-ում ընդհանուր բնակչության մեջ ԱՏԲ մասնաբաժնի ցածր ցուցանիշով, իսկ աշխատանքային տարիքից բարձր բնակչության տեսակարար կշռով գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշը:

8. Կոտայքի մարզն աչքի է ընկնում ՀՀ միջին ցուցանիշից աշխատանքային տարիքի և աշխատանքային տարիքից ցածր բնակչության բարձր տեսակարար կշռով, ինչպես նաև հետաշխատունակ տարիքի բնակչության ցածր ցուցանիշով: Կոտայքը եզակի մարզերից է, որտեղ թեև աննշան, բայց հետմարդահամարային ժամանակահատվածում բնակչության թվի ավելացում է դիտվել:

9. Շիրակի մարզում վերջին հինգ տարիների ընթացքում տեղի է ունեցել ընդհանուր բնակչության մեջ մինչաշխատունակ բնակչության մասնաբաժնի ավելացում, ինչը դրական երևույթ է բնական հավելաճի ՀՀ միջինից ցածր ցուցանիշ ունեցող այս մարզի համար: Այդ նույն ժամանակահատվածում աշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշիռը թեև մի փոքր նվազել է, բայց շարունակում է գերազանցել ՀՀ միջին ցուցանիշը:

10. Սյունիքի և Վայոց ձորի մարզերը ՀՀ-ում բնակչության թվով վերջին եռյակում են և ունեն բնակչության գրեթե նույն սեռատարիքային կառուցվածքի

պատկերը: Երկուսում էլ աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը փոքր ինչ գերազանցում է հանրապետության միջինը, սակայն մինչաշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինները ցածր են ՀՀ միջին ցուցանիշից, իսկ ԱՏԲԲ մասնաբաժինները բարձր են ՀՀ միջին ցուցանիշից: Վերջիններս ստեղծում են անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակ լեռնային և սահմանամերձ դիրք ունեցող ՀՀ այս մարզերում:

11. Տավուշը ՀՀ ամենածերացող մարզն է: Թեև մարզի աշխատանքային տարիքից ցածր բնակչության տեսակարար կշիռը գրեթե հավասար է ՀՀ միջին ցուցանիշին, սակայն աշխատունակ տարիքի բնակչության ամենացածր և հետաշխատունակ տարիքի բնակչության ամենաբարձր մասնաբաժինները ՀՀ մարզերի շարքում սահմանամերձ դիրք (մարզի 65 բնակավայրերից 46-ը՝ կառավարության համապատասխան որոշման համաձայն համարվում են սահմանամերձ) ունեցող այս մարզում են:

12. Երևան քաղաքում թեև ապրում է հանրապետության բնակչության 1/3-ից ավելին, սակայն այն առանձնանում է առավել անբարենպաստ սեռատարիքային կառուցվածքով: Հանրապետությունում մինչաշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինն ամենացածրը Երևանում է, իսկ հետաշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշռով՝ երկրորդն է Տավուշից հետո: Բացի այդ ԱՏԲ մասնաբաժինը ևս ցածր է ՀՀ միջինից:

Այսպիսով, հանրապետության մշտական բնակչության սեռատարիքային կառուցվածքի առկա իրավիճակը և ստեղծված տարածաշրջանային առանձնահատկությունները պահանջում են.

1) Հանրապետության մասշտաբով իրականացնել սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական այնպիսի քաղաքականություն, որը հնարավորություն կտա ՀՀ-ում աստիճանաբար ձևավորել բնակչության առավել բարենպաստ սեռատարիքային կառուցվածք,

2) ՀՀ-ում տարածաշրջանային (ռեգիոնալ) քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը պետք է դառնա ժողովրդագրական բարենպաստ քաղաքականության կազմակերպումը՝ մարզերի, մասնավորապես լեռնային և սահմանամերձ տարածաշրջանների բնակչության ծնելիության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

3) Հանրապետության մարզային և տեղական ինքնակառավարման մարմինները սոցիալ-տնտեսական տարաբնույթ ծրագրերի կազմման և իրականացման համար պետք է առավելագույն չափով հաշվի առնեն մարզի և նրա առանձին բնակավայրերի բնակչության սեռատարիքային կառուցվածքի արդի վիճակը և միջոցներ ձեռնարկեն մարզում առավել բարենպաստ ժողովրդագրական իրավիճակ ձևավորելու համար:

Ստացվել է՝ 13.10.2016

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Մանասյան Մ.Գ.** Հասարակական աշխարհագրական հետազոտությունների մեթոդները: Եր., ԵՊՀ հրատ., 2008, 258 էջ:
2. “Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ ցուցանիշները)”: Եր., 2003, 542 էջ:
3. “Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2013”: Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, 125 էջ:
4. “Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2015”: Եր., ՀՀ ԱՎԾ, 2015:
5. “ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015 (վիճակագրական ժողովածու)”: Եր., 2016:

6. “1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում”: Եր., 1991, 182 էջ:
7. “Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015”: Եր., ՀՀ ԱՎԾ, 2015:
8. **Պոտոսյան Ա.Հ.** ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը: Եր., 2013, 416 էջ:
9. **Ֆահրադյան Մ.Վ.** Բանկչության կառուցվածքի և վերարտադրության տարածաշրջանային հիմնախնդիրները ՀՀ-ում: Եր., 2010, 495 էջ:
10. www.armstat.am

В. А. ПОТОСЯН

ТЕРРИТОРИАЛЬНЫЕ РАЗЛИЧИЯ И ПРОБЛЕМЫ ПОЛОВОЗРАСТНОЙ СТРУКТУРЫ НАСЕЛЕНИЯ РА

Резюме

В статье на основании анализа и обобщения статистических данных представлена динамика численности населения РА по основным половозрастным группам. На основании данных переписи населения 2011 г. и текущего учета населения за 2015 г. представлена динамика численности и проведен анализ распределения основных групп населения РА по возрасту и полу с выявлением территориальных (региональных) различий и проблем.

V. A. POTOSYAN

REGIONAL DIFFERENCES AND PROBLEMS OF THE SEX AND AGE STRUCTURE OF THE POPULATION OF RA

Summary

Based on the analysis, generalization and summary of statistical data the dynamics of RA population by sex and main age groups is presented in the article. The analysis by sex and major age groups distribution of RA population, the revelation of regional differences and problems have been done based on the census of 2011 and current accounting of 2015.